գամ տեսած չէր իւր քաղաքում իւր Օծեալ Հայրապետին։ Նորին Օծութեան դիտաւորութեան մասին կառավարչապետի դիւանատան կառավարչի միջոցով հրամանագրուեցաւ իշխանութեանց, որպէս զի պատրաստուի առանձին գնացք երկաթուղու Բագու գնալու և այն տեղից էլ Աղստաֆայ վերադառնալու, ինչպէս և այն տեղից մինչեւ Ս. Էջմիածին ուղեւորելու համար կարեւոր պատրաստութիւնք լինին կառքերի և ձիերի։

Երեկոյեան 4 ժամին Վեհափառ Հայրապետը Թադէոս Արք եպիսկոպոսի, Արիստակէս եպիսկոպոսի, Սահակ վարդապետի և պ. Մելիք Ադամեանի ուղեկցութեամբ երկաթուղու արտակարգ գնացքով երբ ուղեւորւում էր Բագու։ Քաղաքիս եկեղեցիների զանգահարութեամբ արդէն ժողովուած էր վանքի գաւթում խուռն բազմութիւն, Ներսիսեան և Յովնանեան ուսումնարանների աշակերտների, աշակերտուհիների, ուսուցիչների և ուսուցչուհիների հետ։ Թիֆլիզի քահանաները փիլոններով երկ—կարգ շարուած Առաջնորդարանից մինչեւ եկեղեցու դուռը սպասում էին Նորին Վեհափառութեան։ Վեհափառը 3 ժամին իջաւ եկեղեցի և այն տեղից դուրս գալով, օրհնեց ժողովրդին ու կառք նստելով ուղեւորուեց դէպի երկաթուղու կայարանն, ուր արքայական սենեակները պատրաստած էին Նորին Օծութեան ընդունելու համար։

Այն տեղ Նորին Վեհափառութեան դիմաւորեցին կառավարչապետի կողմից նորա դիւանատան կառավարիչ գնդապետ պ. Շատիլովը, նահանգապետ իշխան Շերվաշիձէն, քաղաքագլուխն և Հայ հասարակութեան ներկայացուցիչները։

Վեհափառը ճիշդ 3 ժամին 50 րոպէին բարեհաճեց մտնել երկաթուղու կառքը, և այն տեղից «Պահպանիչ»ով օրհնեց իւր հօտը։ Ճիշդ 4 ժամին գնացքը շարժուեցաւ իւր տեղից դէպի Բագու։

Նոյն օրը գիշերուայ 9½ ժամին Նորին Օծութիւնը ժամանեց Գանձակի իջեւանն, ուր քաղաքի հայ եկեղեցական դասն և հասարակութիւնը դիմաւորեցին Նորին Սրբութեան և ստացան օրհնութիւնը։ Իսկ լոյս 22 ի գիշերուայ մի ժամին, Նորին Օծութիւնը բարեհաճեցաւ ընդունել Եւլախի իջեւանում Ղարաբաղի թեմական առաջնորդին իւր եկեղեցական դասով և շատ շուշեցի-